Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀՀ ԿԳՄՄՆ «ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Գավառ 01. 09. 2025թ.

ՀՀ ԿԳՄՄ նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ն / այսուհետ՝ Քոլեջ/ ի դեմս տնօրեն Մարգարիտ Ստեփանի Գնդոյանի, որը գործում է համաձայն Քոլեջի կանոնադրության՝ մի կողմից, «----------» մասնագիտության I կուրսի ուսանողի (այսուհետ՝ Ուսանող)_____ ծնող _____ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Սույն պայմանագրի իրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ Քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության և Կրթության ոլորտում պետական լիազոր մարմնի՝ կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, Քոլեջի կանոնադրությունը, Քոլեջի ներքին կարգապահական կանոնները, ներքին իրավական ակտերը և այլ իրավական ակտեր:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն պայմանագրի առարկան Ուսանողի՝ ***առկա ձևով***, միջին մասնագիտական կրթական ծրագրով **անվճար/վճարովի** ուսումնառություն իրականացնելու կարգն ու պայմաններն են:

2. 2. Ուսանողի ուսումնառության ժամկետը --------տարի է:

3. ՔՈԼԵՋԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. 1 Համակարգված կրթական գործընթացի միջոցով անձի մոտ ձևավորում է անհրաժեշտ մասնագիտական կարողություններ՝ որակավորված մասնագիտական գործունեություն իրականացնելու, ներկայի և ապագայի մարտահրավերներին դիմակայելու, փոփոխվող աշխատաշուկային արձագանքելու, նոր պայմաններին հարմարվելու, շարունակական մասնագիտական զարգացման և կատարելագործման համար:

3. 2. Ապահովում է ուսումնառության անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, առաջին բժշկական օգնություն և սպասարկում, ուսանողների ֆիզիկական զարգացման և առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ:

3. 3. Ապահովում է սովորողների կարիերայի ուղղորդումը և մասնագիտական կողմնորոշումը՝ նպաստելով որակավորման ընտրության, կարիերայի ուղու և մասնագիտական աճի, զբաղվածության և աշխատաշուկայում մրցունակության հարցերում գիտակցված որոշումների կայացմանը:

3. 4. Ուսանողին ծանոթացնում է Քոլեջի ներքին կարգապահական կանոններին և այլ իրավական ակտերին:

3.5. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կամ լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին տալիս է ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների վերաբերյալ:

3. 6. Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, ինչպես նաև կանոնադրության կամ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պահանջները խախտելու համար ուսանողը կարող է Տնօրենի կամ նրա լիազորած անձի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև Քոլեջից հեռացվելը:

3. 7. Ներքին կարգապահական կանոններով սահմանված բացակայությունները գերազանցելու դեպքերում հեռացվում է Քոլեջից:

3. 8. Ներքին կարգապահական կանոններով սահմանված անհարգելի բացակայության դեպքում ուսանողը զրկվում է տվյալ ամսվա կրթաթոշակից:

3. 9.Ուսումնառությունն ավարտելու և պետական ամփոփիչ ստուգումը հաջողությամբ հանձնելու դեպքում Ուսանողին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է պետական ավատական փաստաթուղթ՝ դիպլոմ:

4. ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. 1. Քոլեջի Ուսանողն իրավունք ունի՝

4. 1. 1. ընտրելու կրթական ծրագրի մակարդակը, որակավորումը, դրա ուղղվածությունը, ցանկացած կրթական մակարդակում դադարեցնելու կամ վերականգնելու ուսումնառությունը՝ անկախ դրա դադարեցման ժամկետից.

4. 1. 2. ընտրելու և մասնակցելու իր ուսումնառած որակավորման համար ոչ պարտադիր դասընթացների (մոդուլների) և այլ լրացուցիչ կրթական ծրագրերի՝ Քոլեջի սահմանած կարգով.

4. 1. 3. ներկայացնելու առաջարկներ իր որակավորման կրթական ծրագրի բովանդակության և ուսումնառության կազմակերպման ձևի բարելավման վերաբերյալ.

4. 1. 4. մասնակցելու Քոլեջի կառավարման և ուսանողական ինքնակառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին.
4. 1. 5. օգտվելու կրթաթոշակից և ուսանողների ֆինանսական խրախուսման այլ ձևերից, ներառյալ անվանական կրթաթոշակից, նվիրատվություններից և դրամաշնորհներից.
4. 1. 6. Օգտվելու փոխատեղման իրավունքից պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով.
4. 1. 7. Տեղափոխվել և կրթությունը շարունակել մեկ այլ ուսումնական հաստատությունում պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով.
4. 1. 8. շարունակելու ուսումնառությունը տվյալ կամ մեկ այլ Քոլեջի կրթական ծրագրով իր ուսումնառած կրթական ծրագրերից որևէ մեկի դադարեցման դեպքում՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով.
4. 1. 9. Քոլեջում բարձր առաջադիմություն ցուցաբերելիս՝ կրթությունը շարունակելու բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում:
4. 1. 10. ստանալու ուսման վճարի փոխհատուցում՝ /լրիվ կամ մասնակի /զեղչ// ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. 1. 11. սահմանված կարգով կարող է օգտվելու տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցումից:
4. 1. 12. նախաձեռնելու և ստեղծելու ուսանողական կառույցներ, միավորումներ՝ ուսանողական ինքնակառավարման մարմիններ, ընդգրկվելու և անդամակցելու դրանց ու հանդես գալու ուսանողական նախաձեռնություններով, ծրագրերով, սոցիալական կամավորական միջոցառումներով.
4. 1. 13. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու դեպքում ընդհանուր հիմունքներով կրթություն ստանալու և օգտվելու խելամիտ հարմարեցումներից առանց հավելյալ վճարների.
4. 1. 14. մասնակցելու Քոլեջի որակի ներքին գնահատմանը՝ ըստ սահմանված ուղղությունների.
4. 1. 15. բողոքարկելու Քոլեջի ներքին իրավական ակտերը, իր իրավունքները պաշտպանելու դատական կարգով.
4. 1. 16. օրենքով, Քոլեջի կանոնադրությամբ, ուսանողի հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ:
4. 2. Քոլեջի Ուսանողը պարտավոր է՝
4. 2. 1. կատարել Քոլեջի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները.
4. 2. 2. մասնակցել համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի ուսումնառությանը.
4. 2. 3. ուսումնառության պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարել ուսման վարձը, կատարել պայմանագրային այլ պարտավորություններ.
4. 2. 4. Դուալ մոդելով ուսումնառող ուսանողը աշխատավայրում պարտավոր է կատարել հրահանգչի հանձնարարությունները, տվյալ մասնագիտության զբաղմունքից բխող գործնական առաջադրանքները և պահպանել անվտանգության և ներքին կարգապահական կանոնները:
4. 2. 5. Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող դիմորդը պետք է ներկայացնի մուտքի արտոնագիր և ժամանակավոր կացության կարգավիճակի մասին տեղեկանք՝ լիազոր մարմնի սահմանված կարգով:

5. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5. 1. Պայմանագրի կողմ հանդիսացող Ուսանողն ընդունվել է **անվճար/ վճարովի** համակարգ:
5. 2. ---------- մասնագիտության համար նախատեսված վարձի չափը ըստ ուսումնական տարիների՝ ---------- դրամ է :
5. 3. Ուսանողն ուսման վարձը կարող է վճարել ինչպես ամսական, այնպես էլ կիսամյակային կտրվածքով:
5. 4. Վճարովի համակարգում ընդունված կամ ուսումնառության ընթացքում օրենսդրությամբ սահմանված հիմքերով վճարովի համակարգ տեղափոխված Ուսանողի ուսման վարձը ենթակա չէ փոփոխության և գործում է տվյալ կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխությունը բարենպաստ է ուսանողի համար:
5. 5. Ուսանողի նախաձեռնությամբ կամ մեղքով Պայմանագիրը լուծվելու դեպքում տվյալ փուլի վճարված ուսման վճարը չի վերադարձվում:
5. 6. Ուսման վարձը չմուծած ուսանողին չի թույլատրվում մասնակցել քննաշրջանին:
5. 7. Ուսման վարձը վճարվում է անկանխիկ, քոլեջի հաշվարկային հաշվին՝ 900178000353 ՀՎՀՀ 08402239 : Ուսանողը պարտավոր է վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել Քոլեջի համապատասխան ստորաբաժանում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

6. 1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
6. 2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի համաձայնությամբ, Կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. 1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության նյութական և դատավարական նորմերի կիրառմամբ:
7. 2. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
7. 3. Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր օրինակից, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Ուսանողին (ներկայացուցչին), իսկ մյուսը՝ Քոլեջին:

8. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

Ուսանողի	*«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂ. ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ*
Օրինական ներկայացուցչի	Հասցե՝ ք. Գավառ, Ազատության 38, հեռ. 2-34-02
*Ստորագրություն*_____	Բանկը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն
Անձնագրի	ՀՎՀՀ 08402239 Հ/Հ 900178000353
Սերիա _____Համարը_____	
Երբ է տրված _____	
Ում կողմից _____	Տնօրեն՝ Մ. Գնդոլյան
Հասցե _____	
Հեռ._____	

Ես՝ _____, սույն պայմանագիրը ստորագրելիս ծանոթացա հիմնական պայմաններին, քոլեջի ներքին կարգապահական կանոններին, քոլեջի այլ ներքին իրավական ակտերին և ստացա պայմանագրի մեկ օրինակը.

_____

(ստորագրություն)